



# ԲԱԶՄԱՎԵՐ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 2 .

1851

ՅՈՒՆՈՒԱՐԻ 15 .

## Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

ՅԱՂԱԳՍ ՄԱՐԻԿԱՅԻՆ ՊԱՄՏՈՒՅ

ԳՂՈՒԽ Ի .

Սերոյ յարեչ :

ՊԱՏՈՒԷ կնիկ մարդը , բայց վախ-  
ցիր որ անոր գեղեցկութենէն չխաբուիս ,  
աւելի ալ վախցիր որ քու սրտէդ չխա-  
բուիս :

Այրանի քեզի թէ որ անոր հետ միայն  
սիրտդ կապուի որ պիտի ուզես ու պիտի  
կարենաս քեզի ընկեր ունենալ բոլոր  
կենացդ մէջ :

Աւելի լաւ համարէ սիրտդ ազատ  
պահել սիրոյ ամէն տեսակ կապերէն ,  
քան թէ անարժան կնոջ մը ձեռքը  
տալ : Այնիւ զգացմունք չունեցող մար-  
դը կրնայ երջանիկ ըլլալ այնպիսոյն  
հետ . դուն չես կրնար : Վեզի կամ  
մտնջենաւոր ազատութիւն պէտք է ,  
և կամ այնպիսի ընկեր մը որ մարդկու-

թեան վրայ , և մանաւանդ կանանց  
վրայ ունեցած համարմանդ յարմար ըլ-  
լայ :

Այնպիսին այն ընտիր անձանց մէկը  
պիտի ըլլայ որ աստուածայաշտութեան  
և սիրոյ գեղեցկութիւնը գերազանց  
կերպով կը հասկընան : Այլ որ չըլլայ  
թէ դուն քու երեւակայութեամբդ ա-  
նանկ կարծես զինքն ու անիկայ իրօք  
բոլորովին ներհան ըլլայ :

Ի՞նչ որ զինքը ուզածիդ պէս գտնես ,  
թէ որ տեսնես զինքը իրաւցընէ Աստու-  
ծոյ սիրովը վառուած , թէ որ տեսնես  
զինքը ամէն տեսակ առաքինութեան  
բաղձանքովը վառուելու յարմար , թէ  
որ տեսնես զինքը ձեռքէն եկած բա-

րիքն ընելու ուշադիր, թէ որ տեսնես զինքը անհաշտ թշնամի այն ամենայն գործքերուն որ բարոյապէս ցած են, թէ որ այսպիսի կատարելութեանց հետ ունի նաև կրթութեամբ խելք ու գիտութիւն՝ առանց ջանալու զրոյն ալ երևցընել, թէ որ մանաւանդ այնպիսի խելքով ալ կանանց մէջ ամենէն խոնարհամիտն է, թէ որ ամէն խօսքերէն ու գործողութիւններէն կ'երևնայ իրեն բարեսրտութիւնը, գեղեցիկ բնականութիւնը, վսեմ զգացմունքը, պարտքերը կատարելու հաստատուն կամքը, սաստիկ ուշադրութիւնը որ չըլլայ թէ մէկուն սիրտը կոտրէ, հապա մանաւանդ միտքարէ զանոնք որ սրտերնին կոտրեր է, և ուրիշներուն մտածմունքը ազնուացընելու բանեցընէ իր կատարելութիւնները, ան ատեն այնպիսի սիրով սիրէ զինքը՝ որ իրեն արժանի ըլլայ :

Գ. ԱՌԻՒ ԻԱ .

Պարսա-եւի սեր :

ԻԱՅՅ, նորէն կ'ըսեմ, աղէկ նայէ որ չըլլայ թէ մէկ կին մը առաքինի կարծելով զարմանաւ վրան, ու իրօք անանկ չըլլայ : Ինչ ատեն քու սերդ վիպասանական սէր մը կը դառնայ, այսինքն ծաղրական ու փնասակար սէր, և սիրտդ անարժան կերպով մը զո՛հ բրած կ'ըլլաս սնտոի կուռքի մը :

Համարման ու մեծ համարման արժանի կին կը գտնուի աշխարհիս վրայ՝ իրաւ է . բայց կը գտնուին, ու շատ կը գտնուին այնպիսի կանայք ալ որ գէշ դաստիարակութեամբ, ուրիշի չար օրինակովը և իրենց թեթևութեամբը աւրուած են, որ առաքինի մարդուն փափաքանացը յարգը ճանչնալու չափ ալ կատարելութիւն չունին, որ աւելի կը սիրեն իրենց տեսքին ու առերևոյթ խելքին համար հաճոյանալ ուրիշներուն՝ քան թէ ազնուական զգացմունքներուն պատճառաւ սիրոյ արժանի ըլլալ :

Բայց այսպիսի անկատար կանայք սովորաբար շատ փնասակար կ'ըլլան, ու նաև բողբոլին ցած բնաւորութիւն ու նեցողներէն ալ աւելի փնասակար : Այս միայն իրենց տեսքովն ու հնարքներովը կը խաբէրբեն, հապա շատ անգամ նաև քանի մը առաքինութիւններով, և յոյս մը տալով թէ իրենց վրայ պակասութիւններէն աւելի կատարելութիւններ կան : Ինչ ընդունիր դուն այն յոյսը՝ երբոր կը տեսնես վրանին չափի դուրս պարծենկոտութիւն կամ ուրիշ ծանր պակասութիւններ : Ինչոնց վրայ դատաստան ըրած ատենդ անաչառ եղիր, չէ թէ վրանին չարախօսութիւն ընելու կամ պակասութիւննին մեծցընելու համար, հապա որպէս զի թէ որ անվայել որոգայթի մը մէջ ինչալու վախ ունիս նէ՛ կարենաս առաջուց փախ չիլ ազատիլ :

Արչափ որ բնութեամբ դիւրամէտ ես սէր և պատկառանք ցուցընելու արժանաւոր անձի մը, այնչափ աւելի պարտք պիտի համարիս քեզի որ մէկուն չափաւոր առաքինութիւններովը գո՛հ չըլլաս ու բարեկամութեան պատու կան անունը չտաս իրեն :

Ինչկիրթ երիտասարդներն ու իրենց նմանները կը ծիծաղին վրադ, հպարտ վայրենի ու կոպիտ կ'ըսեն քեզի . հոգ չէ . արհամարհէ անոնց դատաստանները : Այս հպարտ եղիր, ոչ վայրենի, ոչ կոպիտ, բայց շուայութեամբ ալ զգայմունքներդ մի վատներ . սիրտդ ազատ պահելու համար ամուր կեցիր, և կամ մէկուն նուիրելու ալ ըլլաս՝ այնպիսոյն նուիրէ որ ինչպէս պէտք է նէ արժանաւորութիւն ունենայ :

Ինչկն որ արժանաւոր կնոջ մը վրայ սէր կը ձգէ՝ գերիի պէս անոր շողջօրութեաններ ընելու համար ժամանակ կը չկորսընցընէր : Կինն ալ այն կերպերէն չախորժիր . կ'ամբշնայ այնպիսի պարապորդ ու անհամցած բարեկամ ունենալուն . այն մարդուն միայն բարեկամութեանը վրայ համարում կ'ունենայ՝ որ պարզսիրտ ու ծանրակաց է, և սիրոյ վրայ խօսելու այնչափ փոյթ

չընել՝ որչափ սիրելի ըլլալու գովելի սկզբունքներով ու գովելի գործքերով :

Եւ յի կինն որ թող կու տայ որ մէկը տղու պէս գերի տեսնէ իր ոտքը ընկած , ցածու թեամբ իր հազար ու մէկ խենթ ու խելառ հաճոյքները կատարելու խոնարհած , և խելքը միտքը շինծու գեղեցկութեանց ու կոտորուածքներու տուած , յայտնի կ'իմացնէ որ ոչ անոր վրայ ազնիւ մտածութիւն ունի և ոչ իր վրայ :

ՓԵ՛ՆԼԼԻՔՈՅ

Ա Ռ Ա Կ

Խոսքուն Աշուէ :

- Օր մը ձին , շուն եզն ու իշուկ
- Մէկ տեղ եկած կը խօսէին .
- Նախ շունն ըսաւ . « Երջանիկ դուք
- » Որ չէք մտանած անգութ բաղդին .
- » Ա՛հ , գիտնայիք ի՞նչ կը քաշեմ .
- » Գիշերն արթուն պէտք է սպասեմ
- » Իմ տէրերուս պահպանութեան ,
- » Յօրեկն երթամ փակուիմ զընտան ,
- » Գանցաւորի պէս կապկրպած ,
- » Այսչափ չարեացս ի՞նչ կարծէք վարձ .
- » Քանի մը հատ չորցած ոսկոր ,
- » Քիչ մ'ալ մըքըտ հացի կոտոր » :
- Ատիկայ բան չէ , եզն ըսաւ .
- » Դժբաղդութիւնն ինձի ընկաւ .
- » Դու յոգնութիւնն ի՞նչ է՝ շիտես .
- » Աշխատութիւն՝ խմիրս տես .
- » Կանուխ ելալ ու բորբ օր
- » Կամ սայլ քաշել կամ խիստ արօր .
- » Աս ալ հերիք չէ , կրճակագ ալ
- » Սուր խթանի մը պէտք է տալ » :
- Բայց գուն գոնէ ձմեռն հանգիստ
- » Ախրսին մէջ ծոյլ կը նըստիս .
- » Ըսաւ ձին . ես բերանըս ստնձ
- » Ամառ ձըմեռ մարդ մը շաղկած
- » Դաշտեր ձորեր պէտք է երթամ
- » Պատերազմի մէջ ալ մըտնամ » :
- Փառքով մեռնիլն ալ պարծանք է
- » Ո՛վ բարեկամ , էջը կ'ըսէ .
- » Իմ նեղութիւնս ի՞նչպէս յայտնեմ .
- » Այս բառական է որ ըսեմ ,
- » Թէ մեկուն բաղդն որ աւրբի
- » Ա՛լ բեռնակիր էջ կ'անուանի » :
- Ատնք գանգատ ըրած ատեն
- » Ծերուկ աղուէս մ'անցաւ մօտէն .
- » « Վարպետ աղուէս , ըսին , եկուր
- » Սա թըշուառացս ձար մը ցըցուր » :
- » Թէ որ կ'ուզէք , ըսաւ աղուէսն
- » Որ օգտակար խրատ մը տամ ձեզ՝

» Բաղդին ամենքդ ալ գո՛հ եղիք .  
» Որ ալ գեշին չի հանգիպիք :

Շատ տարիներ աշխարհք տեսայ  
Ամէն տեղ այս գանգատըս կայ .  
Մի՛ յուսաք , փուճ տեղ մի խարուիք  
Ոչ ոք կ'ըսայ հոս երջանիկ :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Լ՛սէ՛նսոսի | ամարթինեայ 'ի կիսանդրին իւր  
'Բերնոսած առ Կոմնն Տ' ( ) ոսէ :

ԿՈՄՍՆ Տ' ( ) ոսէ 'ի սակաւուց անտի է բարեբաստիկ արանց որ պերճալցեալքն են ճաշխարհիկ հանձարով և ներհականօք զոգցես լաւութեամբք , որոց և մին միայն շատ էր արդեօք յաճախել նմա պարծանս :

Հանդերձ կիրթ ախորժական յընտրութիւն ամենայնի որ ինչ վեճմ գեղեցկութիւն 'ի գնացս և յիրս առն ազատականի յաւելուն , և որով համաշխարհական ժառանգեալ է նորա յԱրտակ հոչակ համբաւոյ , ունի նա ձարտարութիւն գերազոյն 'ի նկարս պատկերաց և 'ի քանդակս անդրեաց , և քաջածանօթ իսկ են ամենեցուն կենդանագիրքն և առնապատկերք Վեւիլիկութունի , Կափուէննի , ( ) 'Բոնէլի , Պարլնի և սյրոց բազմաց յաւագ մարդկանէ :

Կոմնն Տ' ( ) ոսէ առանձինն իմն պարտ յանձին կալեալ թուի կենդանագրել զմերոյ ժամանակիս գերահոչակ որերոյն կերպարանս : Սմին իրի և Պարոն | ամարթին 'ի նորա նախատպացն սակի էր , և հարկ էր և նմա զիւրն ունել աշտիճան 'ի գերապանծ կաճառին : Եւ ահա հրապարակեաց կոմնն զկիսանդրի քաջի քերթողին՝ յղեալ և առ նա ինքն օրինակ մի :

Պարոն | ամարթին հանդերձ խոնարհամիտ հեղութեամբն և զիջանող բարութքն՝ ոչ զիւրաւ ամբքի 'ի դատմունս իւր զգեղարուեստից , և ընդ այս չեն ինչ զարմանք . սակայն սքանչացաւ նա ընդ կիսանդրին իւր այնչափ մինչև ա .